

«ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՎԵՐ

Հրավիրում ենք մասնակցելու Շիրակի մարզի գործարարների 2018 թվականի առաջին «ԱՐՄ-ՌՈՍ» բիզնես ֆորումին՝ «Շիրակի մարզի գործարար ռեսուրսները» խորագրով: Այն կազմակերպվում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի Գյումրու մասնաճյուղի, ինչպես նաև Շիրակի մարզպետարանի, Գյումրու քաղաքապետարանի և մարզի համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ֆորումի նպատակն է ծանոթանալ մարզի գործարար միջավայրին, հավաքել և համակարգել առկա գործարար տեղեկատվությունը, այն ներկայացնել ՌԴ տարբեր մարզերի վարչական կառույցներին և գործարարներին՝ հետագա հնարավոր համագործակցության ուղիներ փնտրելու, երկկողմանի կապեր հաստատելու և համատեղ գործունեություն ծավալելու համար:

Ֆորումին կարող են մասնակցել Շիրակի մարզի այն ձեռնարկությունների ներկայացուցիչները և անհատները, ովքեր ցանկանում են գործարար կապեր հաստատել ՌԴ ընկերությունների հետ՝ ներմուծման-արտահանման և տարբեր բնույթի գործարար համագործակցության համար:

Մասնակիցների գրանցում՝ 02 օգոստոսի, ժամը 10:30-11:00

Ֆորումի սկիզբ՝ 02 օգոստոսի, ժամը 11:00-13:00

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՆԶԱԿ-ի Գյումրու մասնաճյուղ՝
ք. Գյումրի, Շիրակացի 68
հեռ. 0312 52153, 094 927972

Էլ. փոստ՝ infolib@mail.ru, gyumri@innovcentre.am